

Կայսերական Բարձրութեան ՄԵծ Իշխան Միլիոյել Նիկոլայելիցին զկով-
կառեան Ցուցահանդիսի բացումն ի Տփխիս Հեռևեալ Հեռագրաւ...—

« Ի սրտէ ուրախ եմ վասն բարեյաջող ժամանման ԶԵՐ՝ ԶԵՎ
բարերարեալն և յոյժ սիրելի երկիրն։ Նորհաւորելով ԶԵՂ
զբացումն Կովկասեան ցուցահանդիսի ընդ բարձր հովանաւո-
րութեամբ ԶԵՐՈՎ, օրհնեմ զնեզ և զամենայն գործակիցս ԶԵՐ
վասն կարգաւորելոյ զայնս նոր գրաւական ծաղկման ամենայն
ճիւղից տշխատանաց և ընդհանուր բարօրութեան բազմա-
ցեղն Կովկասի. նախախնամութիւնն երկնից հովանասցի ի վե-
րայ ԶԵՐ և ամենից աշխատաւորաց, որք ի գործ եղին զջանո
իւրեանց վուան զարգացուցանելոյ զպէսպէս շնորհս պարգև-
եալս նոցա յԱստուծոյ»։

Նորին Կայսերական Բարձրութիւնը բարեհանեցաւ պատասխանել Նորին
Պրութեանը հետեւալ հեռագրով։

« Ի սրտէ շնորհակալ եմ ԶԵՐ սիրալիր Հեռագրի և Նորանով
արտայայտած ջերմ զգացմանցդ համար»։

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ.

Մկրտիչ քահանայն Ղ. շլաղ գեղջ թեմին Ղ. արաբաղու, որ ար-
գելեալ էր ի քահանայագործութենէ, ի 1887 ամէ հետէ,
ի պատճառս վատ ընթացիցն հակառակ քահանայական կոչման
իւրոյ՝ ի գայթակղութիւն ժողովրդոց, կրկնակի խնդրագրաւ
իւրով գիմելով ի շնորհս Նորին Վեհափառութեան, յայտնելով
զո՞ւմն վասն սխալանացն իւրոց, արժանացաւ Ներողութեան
Նորին Վեհափառութեան, ուստի և Սրբազան Սինօդն ըստ
օրագրութեան իւրոյ որ ի 28ն յուլ. անցելոյ հրամայեաց Վի-
ճակային Աստենին Ղարաբաղու արձակել զնա ի պատժոյն և
թոյլ տալ նմա վարել զպաշտօն քահանայութեան։

ի 14ն սկզբու Ըստ հրամանի Նորին Վեհափառութեան Արքա-
ղան Սինօդն կարգեաց ի պաշտպանունս Փոխանորդութեանց,
զբարեշնորհ Գրիգորիս վարդապետն Ցէր Յակոբեան՝ Հին
Նախիջնանայ, և զբարեշ. Եսոյի վարդապետն Աստուածա-
տրեան՝ Աբալցիսայի:

ի 15 սեպտ. Առ. յայտարարութիւն Վիճակային Կոնսիստր-
քիային Հայոց Երևանայ, ի 16ն օգոստ. տարւոյս, Համարաւ
3357. Սրբազն Սինօդն հրամանագրեաց նմին՝ արկանել ընդ
եկեղեցական ապաշխարանօք ըստ նկտողութեան իւրում,
զամենայն օրինազանցսն և զյանցաւորմն ի թէմին Երևանայ
որ վատաշէրութեամբ պահեն զապօրինի կանայս լնդդէմ
օրինաց՝ և տալ արտաքսել զնոյնպիսիս զի մի ճարակեացի
ակտն ի ժողովրականն:

ի 29 սեպտ. Համաձայն Խնդրանաց Ատենադպրի Սինօդին
Արոյ Էմիածնի Աստիճանաւոր Մտեվաննոսի Մուշեղեանց, յա-
նուն Նորին Վեհափառութեան, Սրբազն Սինօդն արձակելով
զնա ի պաշտօնէ Ատենադպրութեանն ի պատճառս ծերու-
թեանն և նուազութեան տեսութեանն՝ յանձնեաց նմա զպաշ-
տոն Դիւանապահի իւրոյ, իսկ զպաշտօնն Ատենադպրութեան
ետ Աստիճանաւորի Պ. Սիմէօնի Գիլիպպոսեան:

Խոյմարուց ըմառն ու առիւ և միջու սշուն ի խոյմար խոզու
մասն եւ առողման առանձնութաւ ըստ այլ մրամաշաւու նույն մետքոր
առ մքօնի մարտացը մ կուռ և առ առաջնութէ միջու
մի բարձրաւոց լոյնուաւ լուս մ 82 հ ու լուս մասն մարտքաց
և մընծուար և ամբ յաջանդաւ առաջարարամ միջման միջաման

ի 84ԱՐԱՆԻ ՄՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԷջՄԻԱՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊՈՏ.